«Գաշնակ կուսակցութիւնը, որ տարածուած է Սուրբայէն բոլոր շրջանները եւ որուն մէջ ակնաւոր մարդիկ կան — բոլորովին փաստաբան եւ լին: — Կ'ուզէ Սուրբայէն հայրենակիցները նոր թուրքերու դէմ հանել, յաւակնելով թէ այդ երկիրը իրենց հայրենիքն է: Այս կուսակցութիւնը կ'ուզէ նաեւ տապալել ներկայ խորհրդային Հայաստանի իրաւակարգը եւ իշխանութիւնը: Ինչո՞ւ սակայն այսպէս կը շարժուին, — իր նախկին սեւ եւ բունակալ տիրապետութիւնը վերահաստատելու եւ իր ոճրածին ու աւագակային գործունէութեան ընթացք տալու համար, այնպէս ինչպէս կ'ընէր պատերազմի միջոցին եւ պատերազմէն յետոյ, մինչեւ այն օրը որ այս յիմարները վտարուեցան թուրքերէն: (Էլ - Շապա, 9 մարտ 1929):»

Հարկ է բացատրել որ այսքան արդէն կը պարզէ Սուրբայէն կարգ մը շրջանակներուն մէջ կուտակուած կիրքը՝ Դաշնակցութեան, եւ անուղղակի՝ հայ ժողովուրդին դէմ:

Անա թէ ինչու կը գրէինք թէ՛ նորագոտ Սուրբայէն կարգ մը թերթերը պարզապէս իւր կը քսեն թուրքերու հացին, իրենց իսկ երկրին շահերուն դէմ: Եւ անա թէ ինչպէս, աւելորդ անգամ մըն ալ, կը հաստատուի որ Պէյրուքի սպանութեան խնդիրը պարտուակ մըն է՝ ուրիշ հաշիւներ կարգադրելու: Մէջ խօսքով, թուրքերու շահերի դաւի մը զոհերն են ծանօթ բանտարկեալները, 30 հոգի:

Դարձեալ «Էլ Շապա»ն էր կուտայ նոր փաստը՝ այս հա մոգման:

Յօդուածին շարունակութեան մէջ, արարական թերթը կը նկատէ:

«Ընթերցողներուն ուշադրութեան կը յանձնենք այն պարագան թէ՛ անոր գոյութիւնն ու գործունէութիւնը Սուրբայէն մէջ՝ զէջ արձագանգ պիտի գտնէ թուրքերու մէջ... «Դաշնակ»ի գործունէութիւնը մեր երկրին մէջ կրնայ մեր դիրքը վտանգել եւ թուրքերու մեզի դէմ հանել: Արդէն սահմանադրուած իր դէպքեր այս կուսակցութեան գործունէութեան արդիւնքն են»:

Վաղուան ձգելով յօդուածին ուրիշ յատկանշական մասերը, արտատպենք վերջաբանը:

«Ֆրանսան պէտք է ապահով ըլլայ որ՝ եթէ այս կուսակցութիւնը թուրքերու դէմ իր բռնած դիրքովը շարունակէ իր գոյութիւնը, ամէնէն աւելի տուժող ինք պիտի ըլլայ: Սուրբայէնի նստեղեակ են այս կուսակցութեան գոյութեան եւ անկէ բխելիք վնասներուն: Մենք յանուն Սուրբայէնի, Ռոմի, Սոմալի, ԿԸ ՊԱՆԱՅԵՆԻ ԳԱՇՆԱԿԻՆ ԶԵՂՈՒԹԻ ԲՈՂՈՐ ՍՈՒՐԻԱԿԱՆ ԵՒ ԼԻԲԱՆՆԵԱՆ ԵՐԿՐԱՄԱՍԵՐՈՒ ՄԷՋ: ԿԸ ՊԱՆԱՅԵՆԻ ՆԱԵԻ ԶԵՂՈՒՄԸ ԲՈՂՈՐ ԱՇԽԱՍՏԱՔԻՆԵՐՈՒՆ, ԸՆԿԵՐԱԿՅՈՒԹԵԱՆՑ ԵՒ ՀՐԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆՑ, ՈՐՈՒՄ ԴԱՇՆԱԿԻ ԿՆԻՔԸ ԿԸ ԿՐԵՆ: Մենք պիտի պահանջենք յամառօրէն, մինչեւ որ մեր պահանջը իրականանայ»:

Ուրեմն, այլեւս գաղտնիք չէ թէ ուր է թաղուած շան դուրը:

Մա՛ն Դաշնակցութեան, Սուրբայէն բոլոր մասերուն մէջ: Այ՛ կարճակերպութիւն, ոչ աշխատանք, ոչ իսկ հրատարակութիւն:

Արդ, իբրեւ անկեղծ բարեկամ Սուրբայէն եւ Լիբանանի նորագոտ ժողովուրդներուն, պարտականութիւն կը սեպենք յայտարարել թէ՛ այս մարտկոչը բոլորովին կը համապատասխանէ սահմանակից թուրքերու շահերուն, բայց երբեք՝ իրենց բարեքին:

Մենք տակաւին առիթ կ'ունենանք պարզելու Դաշնակցութեան ամբողջ քաղաքականութիւնը, Սուրբայէն թէ՛ Լիբանանի մէջ: Բայց խորապէս կը ցաւենք, որ թուրքական սարսափներէն չազիւ ազատուած ժողովուրդի մը մէջ թերթը՝ այնքան շուտ կը մտնայ երկրի, եւ այնքան թերի գաղափար ունի իր սեփական երկրի շահերուն մասին:

«Էլ Շապա»ները, կամ անոր յօդուածագիրը, Ամմէտ Զէքի Արիւնի կրնան պահանջել Դաշնակցութեան շնորհակալութիւնը: Սակայն իրենց երկրին օրէնքները, ոչնչացնելով հանրային գործունէութեան եւ մամուլի ազատութիւնը: Կրնան միտքերը փոխորդել եւ պայման դնել որ բոլոր Հայերը վտարուին Սուրբայէն եւ Լիբանանէն:

Բայց թող չմոռնան մէկ բան, — սահմանէն անդին թուրքերն են իսկ թուրքերը երկու բախտակից ժողովուրդներ գտնեցնելէ յետոյ, զանոնք գատ-գատ զարնելու արհեստը այնքան կատարագործած է, որ շուտով խելքի կը բերէ բոլոր «Էլ Շապա»-ները: Եւ դժբախտաբար շատ ուշ մնացած պիտի ըլլան: Ինչպէս որ, զեւ երկու օսմանեան կայսրութեան լուծին տակ, այնքան չափազանց արագ թուրքերու ժողովուրդները, Արաբն ու Քիւրտն ալ թուրքեր, թուրքերն սրած դաշակը մխելով «Խային» հոչակուած յայտ կողմին, փոխանակ մէկ ճակատով կուտելու:

Այսօր ալ, նոյն սեւ ձեռքն է որ կը գործէ Պէյրուքի եւ Երբայի մէջ, գործիք դարձնելով կարճատեւ եւ կրքոտ յօդուածագիրներ:

Բարեբախտաբար, աննշան բացառութիւններ են «Էլ Շապա»-ներն ու Ամմէտ Զէքիները:

ՄԱՍՈՒԼ

ՀԱՅԵՐԸ ՍՈՒՐԻՈՅ ՄԷՋ

Յուսաբեր պատասխանելով Դաճակուի ազգայնական էջ-նապ թերթին, որ հայ թերթի-նք եւ կուսակցութիւնները կը հրաւիրէր իրենց տեսակետները պարզել Սուրբայէն, կը գրէ (13 մարտ):

«Մեզի համար ամէնէն առաջ տեսակետներէ ու գաղափարներէ շատ աւելի բարձր, անվերաքննելի դաւանանքի մը համազօր սկզբունք մըն է չմիջամտել մեզ հիւրընկալող երկրի ներքին գործերուն: Այս տեսակետով մենք ունինք գաղտնի, որ յայտնի չըլլայ: Ա եւ է կասկածի—թող թէ ամէնէն անհիմն ու ամէնէն աննշան — տեղի տուած չըլլալու համար, մենք կամովին հրաժարած ենք մինչեւ իսկ այն իրաւունքներէն, զորս հիւրընկալ երկիրները պարզեւած են մեզի: Եկեղեցի, դպրոց, թատրոն, ընթերցասրահ, գրադարան ու գրական ակումբներ, որբարան ու աղքատներին, սիրահարման ու արհեստանոցներ, — այն համառօտ ցանկը այն հաստատութեանց ուր մեր ազգային կեանքը կ'ընթանայ: Գերագոյն գոյոգու-թեանց գնով այս բոլոր ձեռնարկները կեանքի կոչած ենք մեր հայրամայր մեր իսկ ինչոց-ներով ոտքի կցնելու, մեր վերջեր մեր ձեռքերով բուժելու ու մեր հանապազօրեայ վիշտերուն եւ ուրախութեանց մէջ կապուած մնալու մեր հեռուոր հայրենիքին, անոր լեզուին եւ ականդութեանց»:

Իբր արդար վաստակով մեր պէտքերը հոգալ, բեռ չըլլալ հիւրընկալ ժողովուրդներուն վրայ, բացարձակապէս եւ ընդ-միշտ հեռու մնալ երկրի ներքին գործերուն միջամուկ ըլլալու փորձերէն, առաւելագոյն չափերով ստատր հիւրընկալման արհեստական բարգաւաճումին ու սիւստանակ ազգային, կրթական, կրօնական ու մարդասիրական ձեռնարկներու ու հաստատութեանց միջոցով տարագիր հայուն մէջ կենդանի պահել իր սէրը դէպի մայրենի լեզուն, ազգային ականդութիւններն ու դէպի իր վերջապետ ու հեռուոր հայրենիքը,— այն՝ այն քաղաքականութիւնը, որուն կը հետեւին հայ ժողովուրդի ծոցին մէջ գործող բոլոր քաղաքական կուսակցութիւնները— ու նաեւ, ի հարկէ, Դաշնակցութիւնը — գաղութներու, ի թիւս որոնց նաեւ Սուրբայէն ու Լիբանանի մէջ»:

ՅԵԹԻՉ ԳԸՅ ՊՈԼԻՍ ԿԵՐԹԱՅ

Փարիզի թուրքերական Յեթիչ պէյ մօտերս Պոլիս պիտի երթայ եւ անկէ ինկարի պիտի մեկնի: Գետապետ արտաքին գործակալութեան տեղեկութիւնները պիտի տայ սուրբայական սահմանի եւ կտրուներու շուրջ իր կատարած բանակցութիւններուն մասին:

ՄՍՈՒՐԻՆԵՐՈՒ ՎՐԱՅ ՏՈՒՐԻՔԸ

Էնկիւրիի Ազգ. Ինժ. ժողովին ներկայացուած է օրինագիծ մը, որով կը պահանջուի կրկնապատկել 25-45 տարու ամուրի այրերուն եւ 20-35 տարեկան ամուրի կիներուն վրայ գրուած տուրքը: Անգաւակ այրերն ալ ենթակալ պիտի ըլլան այս տուրքին: Օրինագիծին նպատակն է գոյացած հասոյթով օժանդակել բազմադամ ընտանիքներուն, անոր հարիւրին 20ը յատկացնելով հինգէ աւելի գաւակ ունեցող ծնողներուն:

ՕՐԸ ՕՐԻՆ

ՆՈՐ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆ ՍՈՒՐԻՈՅ ՄԷՋ

ԱՊՍՏԱՄԲԵՐԸ ԳՐԱԽԱՍ ԵՆ ՀԱԼԷՊԸ

Պոլիս, 20 մարտ.— Էնկիւրիի թուրք կէս-պաշտօնական «Հաքիմիէթ Միլլիէթ» թերթին համաձայն, ապստամբական մեծ շարժում մը պայթած է Սուրբայէն մէջ:

Ֆրանսական կառավարութիւնը անմիջապէս միջոցներ ձեռք առած է ապստամբութիւնը զսպելու համար եւ տեղւոյն վրայ դրկած է գաղթային զինուորներ՝ 15 հրասայլով եւ 6 օդանավով: Չորսընթաց համաձայն, որոնք դեռ չեն հաստատուած, ապստամբները գրաւած են Հալէպը:

ԽՄԲ.— Այս լուրը հաստատուած չըլլալով ուրիշ աղբիւրէ, վերապահութեամբ կը հաղորդենք:

Ի նկատս Սուրբայէն հայ գաղթականներուն

Պէյրուքէն կը հաղորդեն որ ֆրանսական մարզպան Պ. Հանրի փոնսօ մարտ 9ին Պէյրուքի Հայոց գաղթականները այցելած է՝ ընկերակցութեամբ Պ. Մովսէս Տէր-Գալուստեանի եւ Ազգերու Դաշնակցութեան եւ Միջազգ. կարմիր խաչի պատուիրակ հարիւրապետ Փէթրուրի:

Այս վերջինը Ազգերու Դաշնակցութեան խորհուրդին կողմէ մասնաւոր պաշտօնով դրկուած է՝ քննելու համար Սուրբայէն եւ Լիբանան հաստատուած հայ գաղթականներուն վիճակը: Հարիւրապետ Փէթրուրը Պէյրուքի մէջ իր քննութիւնները աւարտելէ յետոյ պիտի այցելէ միւս շրջանները:

Սուրբայէն թերթերը այս առթիւ կը գրեն թէ՛ նոր ջանք մը եւ գարկ մը կը տրուի հայ գաղթականներէն դեռ անօգնական մնացած մասին վիճակը բարելաւելու համար:

Ինչպէս գրեցինք, Ֆրանսական կարմիր խաչը երկու հիւանդապահուհիները դրկած է արդէն Հալէպը:

Լրացուցիչ տեղեկութեանց համաձայն, կարմիր խաչի Միջազգային Դաշնակցութեան կողմէ պաշտօն տրուած է հարիւրապետ Փէթրուրի պարնեւաւորին այն հայ գաղթականներու խումբերը որոնց տեղաւորումը կատարած էր արդէն Պրուսիէ: Ֆրանսական կարմիր խաչին կողմէ Պէյրուքի հասած հիւանդապահուհիներն են Օր.ներ Տօպէլը եւ Քոթէլը:

Հարիւրապետ Փէթրուրը Ֆրանսական մարզպան փոնսօի ներկայացուած Պէյրուքի շուկայական դեպքին Հակըլիինի կողմէ: Հարիւրապետը մարզպանին բացատրեց իր առաքելութեան նպատակը եւ աշխատանքի ծրագիրը: Պ. Փոնսօ մեծապէս շահագրգռեցաւ եւ խոստացաւ աջակցիլ ամէն կերպով: Մարտ 10ին հարիւրապետը, Պ. Պրուսիէ, երկու հիւանդապահուհիները եւ Անտիոքի երեսփոխան Պ. Մովսէս Տէր-Գալուստեան Պէյրուքէն Անտիոք մեկնեցան՝ գործի ձեռնարկելու համար:

ՄԱՅ ՄԱՐԱԶԱԽՏ ՖՈՑԻ

Չորեքշաբթի իրիկուն ժամը 17.45ին կը ընկէ փողոցի իր ընկալարանին մէջ մեռաւ մարաշխիտ Ֆերիտին Զոյ, որ քանի մը ամիսէ ի վեր հիւանդ պառկած էր: Մահը առաջ եկաւ սրտի կաթուածէ, երբ պատուհանին առջեւ թիկնաթոռի մը վրայ նստած փողոցի անցուղաբձը կը դիտէր եւ բժիշկը եկած էր զինք անկողին փոխադրել: Վերջին խօսքը եղաւ «Օ»»:

77 տարեկան էր:

Երեսփ. ժողովը նիստ կը գումարէր, երբ լուրը իմացուեցաւ: Վարչապետ Փուանքարէ անձամբ հաղորդեց զայն խորհրդարանին: Նախարարական խորհուրդը, Երեսփ. ժողովը շէնքին մէջ նիստ գումարելով որոշեց ազգային յուրարկաւորութիւն ընել պատերազմի յաղթականին: 1870ի Հանրապետութենէն ի վեր ինչպէս ազգային յուրարկաւորութիւն միայն կատարուած է մեծ դէմքերու համար. ասոնք են՝ Վիթթոր Հիւկօ, Կամպիլթթա, Նախագահ Ստիւ Բանսօ, Փասթէօր եւ Նախագահ Ֆէլիքս Զօր:

Մարմինը քանի մը օր էլ թուալի Յաղթական կամարին տակ ցուցադրուելէ յետոյ, պիտի թաղուի Էնկիւրի մէջ: Յուրարկաւորութիւնը հաւանաբար պիտի կատարուի յառաջիկայ երեքշաբթի:

Պատերազմական նախարար Փէնլըվէ յայտարարեց.

— Մարաշխիտ Ֆոյի մահը սուգի կը մատնէ ամբողջ Ֆրանսական բանակը եւ բոլոր այն բանակները, որոնք միասին կուտենան Մեն Պատերազմին: Ամէնէն նշանաւոր զօրական մըն է, որ կ'անհետանայ: Անկալ պիտի ապրի Պատմութեան մէջ՝ մ'ծ յաղթականներու՝ Կեանքի, Աղբաւորի եւ Նախորդի կողմին: Բայց Ֆոյ ազատաբար մը եղաւ: Այն հիւանդի ճիգը, որով 1918ին իրարու ետեւէ գրաւեց թշնամիին մանրակրկիտ կերպով շինած պաշտպանողական յաջողական զինքը, հիացում պիտի պատճառէ բոլոր դաւերուն»:

Մարաշխիտին մահը ոչ միայն Ֆրանսայի, այլեւ բոլոր դաշնակից երկիրներու մէջ մեծ յուզում առաջ բերաւ: Պոլտուրի, Չէմպրլէյն եւ Լոյտ ձորձ հաւաքողներու կը նախագահէին երբ լուրը ստացան եւ գովախոսով ոգեկոչեցին մարաշխիտին յիշատակը:

Լորտ Ալէնպի րսաւ. «Մարաշխիտ Ֆոյի մահով կը կորսնցնենք բարեկամ մը եւ (Լուրերու շարունակութիւնը կարդալ Գ. Էջ)

ՏՈՄՍԵՐ

ՉՐՈՅ՝ ՄԱՐԴՈՒ ՍԸ ՇԵՏ

Անցեալ դարերու անասունները առակախօս էին:

Քանսերը դարու անասունները արդէն փիլիսոփայ դարձած են ու լուր կարծիքներ կը յայտնեն վերացական ու գործնական, ազգային, քաղաքական ու բարոյական, մինչեւ իսկ աստուածաբանական հարցերու շուրջ:

Այդ է պատճառը որ իբր տարբեր ցեղի արարածներ, որոնք կրնան մարդկային գաղափարներ յղանալ ու յայտնել, շատեր կը փութան առեղծուածներու լուծումը հարցնել անոնց: Մէկը կը խօսի էշուն հետ, ուրիշ մը զօրոյց կ'ունենայ շան հետ, միւսը կը տեսակցի կովուն կամ գոմէշին հետ եւ միշտ՝ առանց թարգմանի:

Իսկ ես որ անասուններն սովորու չափ չեմ գարգացած եւ չեմ կրնար ազգային խնդիրներու շուրջ, օրինակ՝ ուղտին կարծիքը հարցնել, կը նախընտրեմ խօսիլ «Պայքար» խմբագրին հետ, որ գոնէ մարդու կերպարանք ունի:

«Պ. խմբագիր, ձեր մէկ գրութեան մէջ, կ'ըսէք թէ Պէյրուքի «ձերակալութեան» ոչ թէ չէ, այլ 35 Դաշնակցականներ են միայն...»

— Կը գուշակեմ հարցումդ: Այդ ըսել չէ թէ Դաշնակցականները Հայ չեն, այլ թէ Հայերը Դաշնակցական չեն, եւ եթէ Հայերուն մէջ Դաշնակցականներ կան, բայց Դաշնակցութեան մէջ Հայեր չկան:

— Որ մը երբ պարապ Ժամանակ ունենամ, կը քանամ քակել ձեր այդ հասկումին իմաստը: Բայց Հայ թե՛ Դաշնակցութիւնը, որ...»

— Խնդրեմ, անուէն մի դատուել: Եւ ինչ փոխել է ունենալ: Բնորդ կրնայ անուն մը ընտրել եւ կրել: Անունը չէ որ Հայ կը ընէ: պէտք են մասնաւոր յատկանշանք, որոնց խոսքաբան ուսումնասիրութեան վրայ հիմնուած է մեր իսմիկ. առաքելական կուսակցութեան ծրագիրը: Ինչ կ'ըսէ...»

— Որ բոլոր Հայերը իսմիկաւոր են...»

— Ո՛չ, իսմիկաւորները միայն Հայ են...»

Կը պատրաստուէի զգայացուցիկ պատասխան մը տալ, երբ ըրի սենեակէն փրկուած աղմուկ մը խանգարեց խօսակցութիւնը: Կը վիճէին, կը կանչէին. խօսքը խօսքին կը խառնուէր ու դժուար խօսքի մըն է կը բարձրանայ, երբ լուսեցաւ բամբակեւ անձանթի մը որ կը պոռար. — Բայց մարդ չէն...»

Որո՞նց համար կ'ըսէր: Չկրնայի հասկնալ: Բայց նկատուող որ թերեւս աւելի արդար պատասխան մը կարելի չէ պիտի ըլլար տալ իմ յարգելի եւ պատուելի խօսակցի, յարմար դատեցի լուսել...»

ԻՄԱՐՏՈՒ

ՔԻՒՐՏ ՄՈՒՍԱ ՊԵՒ ՄԵՆԱՍԹ

Հալէպի «Եփրատ» կը տեղեկանայ թէ մարտի սկիզբները թուրքերու զորքերը սահմանազուլիսի վրայ, Հաճօ աղալի բողմեռած է յայտնի քիւրտ ցեղապետ Մուսա պէյ, որ 90ական թուականներուն պատուհասը եղած էր Տարնալապարական: Պատմական մնացած է Կիւլիգարի առեւանգումը եւ այդ առիթով տեղի ու



Ք Ո Ւ Ն Ե Պ Ի Ն
3 ամս. 6 ամս. Տար.
ՏՐԱՆՍԻ 35 ֆ. 70ֆ. 140ֆ.
ԱՆՊԼԵՍ 20 շ. 40 շ.
ԵԳԻՊՏՈՍ » »
ԻՏԱԼԻԱ 250 ֆրանկ
ԱՄԵՐԻԿԱ 6 ամ. 10 ամ.
ԵՒՐՈՊԱ 100 ֆ. 200ֆ.

"HARATCH"

Directeur-Propriétaire
SCH. MISSAKIAN
Rédaction & Administration
Paris (10e)
235 Faub. St. Martin

Հ Ա Ր Ա Թ
23
Մ Ա Ր Տ
1929
23 M A R S 1929

Հասցէի փոփոխութեան համար պէտք է վճարել 2 ֆրանկ

Ն. ՏԱՐԻ ԹԻԻ 913

ՕՐԱԹԵՐԹ, ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԳԻՆ՝ 50 ԱՆՆԹԻՄ

ԵՐԿՈՒ ԽՕՍԲ

ՈՒՐԻՇ ԾԱԼՔԵՐ

Երկի, արտասովորով Դամասկոսի «էլ Շաապ» թերթին մէջ հրատարակուած գրութեան մը կարգ մը մասերը, ուղեցիկը աւելորդ անգամ մը եւս ապացուցանելով թէ՛ մուսթին մէջ խաղերը կը կատարուին մասնաւորապէս թուրքերու կողմէ: Պատրուակ՝ Պէյրութի սպանութիւնը:
Եւ այս՝ ի վնաս բուն իսկ Սուրիոյ և Լիբանանի շահերուն: Որովհետեւ, երկու երկիրներն ալ ոչինչ կը շահին, եթէ անոնց մասնակի վարիչները գիտակցաբար կամ անգիտակցաբար դործիք դառնան թրքական խաղերու, իրենց երկրին Սահմանադրութիւնն անգամ խախտելով: Վերջապէս, ի՞նչ կը նշանակէ լման երկու ամիս բանտարկուած պահել երեք տասնեակ ծանօթ մարդիկ, պարզ սպանութեան մը առթիւ, որ առաջինը չէ Պէյրութի մէջ:
Այլ էր որ մասնաւոր գոյն տուաւ այս տխուր դործին, եւ պղտորեց Լիբանանի եւ Սուրիոյ հանրային կարծիքը, ինչպէս եւ կարգ մը խմբագիրներու եւ պաշտօնեաներու միտքը:
Բացատրութիւնը կը գտնենք, նորէն, «էլ Շաապ»-ի յօդուածին մէջ:

Շարունակելով իր խորհրդածութիւնները «Դաշնակի մասին», արաբական թերթը կը փոփոխայ.
«Այս կուսակցութեան գործունէութեան հանգամանօքն տեղեկանալու եւ Պէյրութի ոճիրին կծիկը բակելու համար, պէտք է նրա՛յն շարժումը շարունակել, ձեռք բերելու, որ կը գտնուի կուսակցութեան կողմէն: Եւ գաղտնիքի բանալին: Հոն է որ կուսակցութիւնը կ'որոշէ առանց խղճի եւ արդարութեան: (9 մարտ 1929):
Յայտարարենք, առանց վերապահութեան, որ երբեք իրականութեան չի համապատասխաներ այս նշանաւոր գիւտը: Զեյնը - Մուսայի մէջ ալ, ինչպէս ամէն տեղ, կը գտնուին Դաշնակցականներ: Թերեւս այնտեղ աւելի տարածութիւն են եւ զորաւոր՝ քան Սուրիոյ ուրիշ մասերուն մէջ: Բայց այս իրողութիւնէն հետեւցնելով թէ այնտեղ է «կուսակցութեան կեդրոնը», և այնտեղ է որ կուսակցութիւնը կ'որոշէ առանց խղճի եւ արդարութեան», կը նշանակէ զո՛հ դառնալ անճարակ մատուցելու մը, կամ գիտակցաբար բանտարկութիւն կատարել, եւ սուսկութեան ուղղորդութեանը յանձնել խաղաղ շրջան մը:
Արդարեւ, ղէպի այս ճամբան կ'առաջնորդեն արաբական թերթերու - կամ անոր հայ տեղեկատուներուն - յաջորդ պատմութիւնները.

«... Այս շրջանին մէջ հայ ընտանիքներ կային, որոնք չուղեցին 1923ին, հանդուրժել «Դաշնակ»-ի տերապետութեան: Արիւնքի լուր մը տեղի ունեցաւ, որու ընթացքին 32 հոգի սպանուեցան, ընդ որս այդ գիւղերուն պետը, իսթէնտէրան, եւ այսպէս ալ «Դաշնակ»-ի ազդեցութիւնը ամէն կողմ տարածուեցաւ: Կուսակցութիւն մը իր հետապնդած նպատակով կը դատուի: Այս կուսակցութիւնը ոճիրէն եւ աւագակութեանէն ուրիշ նպատակ չունի: Համոզուելու համար պէտք է ձեռք բերել Մուսայի:
Այս տողերն ալ կը հաստատեն թէ կամ յօդուածագիրը անտեղեկան է իր երկրին պայմաններուն եւ բարքերուն, կամ կը կեղծէ, եւ կամ թուրքական իւրացուցիչ է հայ տեղեկատուներու խաղաղ յերիւրանցիները: Մեզի համար աւելի հաւանական կը թուի այս վերջինը:
Արդ, Սուրիոյ փողոցներուն մէջ կ'որոշի ներկող տղան անգամ գիտէ որ, շատ հին ժամանակներէ ի վեր «վանտէթթա»-ն արարելէն «տիէթթ» բոյն դրած է այդ շրջաններուն մէջ, նման ալպանական «պէսա»ին, եւ կը շարունակուի սերունդէ սերունդ: Աւելորդ է ինչեւ մանրամասնութիւնները, բայց «էլ Շաապ»-ի յիշած պարագան (1923), ճիշդ այդպիսի դէպք մըն է, անուշտ բարբարոսական եւ դատապարտելի: Մեզի անձնօթ է զոնորուն թիւը, բայց գիտենք որ այնտեղ դէմ դիմաց էին և «Դաշնակցականներ», և հնչակեաններ եւ բոլորովին անկուսակցական մարդիկ: Ի՞նչպէր ինքնին ոչինչ ունէր կուսակցական: Պարզապէս «թախֆա»ներու կողմ, զազանային «վանտէթթա», որ, ինչպէս ըսինք, տեղական խառն է, ոչ թէ այս կամ այն կուսակցութեան քարոզած վարդապետութիւնը:
Եւ ինչպէ՞ս, այսպէս վերափայլ շրջիկ է դէպքերը, կը նշանակէ թէ Հմարակ Արամեանցիներու եւ Արշաւիր Եսսեաններու ճամբան է որ կը շարունակէ: Եւ տրամաբանօրէն, այս պատմութիւնը ուրիշ մարդ պատմած չի կրնար ըլլալ, եթէ ոչ շահագրգիռութեամբ, մասնակից կամ ցածորդի Հայ մը: Թերեւս մէկէ աւելի պայքար:

Եւ ատոր ապացոյցը նոր չէ որ կը տեսնենք: Տակաւին անցնելով, բանտարկեալներու կիները կը հարողջէին թէ ի՞նչպէս կարգ մը սինթրոններ առտու - իրիկուն կը սլքտկան իրենց տուններուն եւ պատուհաններուն առջեւ, խոսակցութիւններ եւ պատմութիւններ իմանալու համար: Իսկ երէկ, Պէյրութէն թղթագրութեամբ մը կրկին եւ կրկին կը պատմէր թէ ի՞նչպէս «հայութեան խառնուրդ», կարգ մը հնչակեաններ եւ համայնավարներ, յարաբանական եւ յամառօքն դաւեր կը լարեն, եւ կը ճգնին, թէ ինչպէ՞ս կը շարունակուի թերթերու մէջ, Դաշնակցութիւնը ներկայացնել իբրեւ խոսքարարներու կազմակերպութիւն, իբրեւ հակառակորդ երկրի շահերուն...: Ու ինչո՞ւ արարանալ որ արաբական թերթը կը ղրէ-
«Այս կուսակցութիւնը ոճիրէն եւ աւագակութեանէն ուղղորդուած նպատակ չունի»:

ՄԱՍՈՒԼ

ՆՈՐ ԳԱՒ ՄԸ

Աթէնքի նոր Օրը կը սերկացնէ հնչակ-համայնավար նոր դաւ մը, որուն նպատակն էր Դաշնակցութիւնը վարկաբեկել Յունաստանի մէջ (13 մարտ).
«Նախկին դաշնակցականի մը (Արտաշէս Յակոբեան) մտային եւ հոգեկան խանգարուած վիճակէն օգտուելով, ինչ համայնակցութեանը, «Արձագանգ»-ի խմբագրատան մէջ հաւաքուելով, սպանութեան սը ծրագրեր կը պատրաստեն: Չոհր պիտի ըլլար Յակոբեանը: Ոճիրը պիտի գործէին ինչ համայնակցութեանը, իսկ հրապարակաւ՝ իբրեւ ոճրագործ պիտի ամբաստանուէր Դաշնակցութիւնը:
Այս ծրագրին զուգընթաց, կ'ուրուշի հանրային կարծիքը պատրաստել կեղծ սպանակներով, յետագային արդարութիւնը մոտրեցնելու նպատակով:
Աւազին կեղծ սպանակները, պատրաստուած համայնակցութեան կողմէ, կը դրուի Յակոբեանին, որ սարսափախար եղած կը փութայ մեղքը փառթելու Դաշնակցութեան վրին՝ անուշտ անգիտակցաբար:
Ասոր կը յաջորդեն ուրիշ երկու կեղծ սպանակները եւս, ուրիշներու հասցէին ուղղուած, նոյն բովանդակութեամբ: Այս ժամանակամիջոցին, մեզի հասած մասնաւոր տեղեկութեանց վրայ հիմնուելով, քննութիւն կը բանանք, ճշմարտութիւնը երեւան հանելու համար:
Քննութեան կը զուգարկուի բոլորիստական ուսուցիչ Գազարի-Յեանի մեր ընկերներէն մէկունը: Երբ զգայացուց յայտնութիւնը որուն համաձայն՝ ինչ համայնակցութեանը ծրագրած են սպանել Յակոբեանը, ու ոճիրը վերաբերել Դաշնակցութեան: Ճիշդ այդ օրերուն՝ ծանօթ համայնակցութեան՝ որ սովորէր աւելուրական պատմութեան մէջ կը պաշտօնավարէր, կը ներկայանայ մեր ընկերներէն Մ. Ն. Ի. եւ կը յայտնէ թէ ինք զգոյն է համայնակցութեանը եւ մտադիր է հետանալ: Ունեցեալ, ի միջի այլոց, քանի մը տեղեկութիւններ ալ կ'ունէր Մ. Ն. Ի.:

Գաւը մերկացնելու վրայ էինք, երբ ճիւղէն «Նոր Օր»-ի ընթերցող մը, մեզ զրկեց խիտ կարեւոր երկուք մը: Քննութեան կարօտ եւ գաղտնի խնդիր մնացած չէ այլեւս:
Մենք պարտականութիւն համարեցինք անմիջապէս եղիւնութիւնը ներկայացնել Ազգ. Կեդր. վարչութեան ատենապետ Տօթթ. Ա. Գրքեարարեանի, իբրեւ այս շրջանի պատասխանատու ազգային իշխանութեան: Խնդիրը պաշտօնապէս տեղեկացուցած ենք նաեւ առ որ անկ է: Հաւանաբար շուտով գործը ձեռք առնուի եւ դաւադրութիւնը իր բոլոր մանրամասնութիւններով երեւան հանուի:
Յանցաորին օճիրը ձեռք առնուցած ենք եւ դժուար թէ ազատուի այս անգամ: Կ'աւելցունենք նաեւ որ Մարտի 1-ին պատասխանատուութիւնը կարծուած էն աւելի մ. թ. է, որովհետեւ քարոզական ներշնչողը այս գործի խաղին ինք կը հանդիսանայ:
Հայ համայնակցութեանը չափը անցուցին այլեւս: Մեր մեղաւարտ լուրերը, փոխանակ զիրենք գգատուցուելու, աւելի անսանձ դարձուցած եւ միտք է զիրենք նման անբարոյական արարքներու:
Տխրուծի օրինակը կ'երեւայ թէ բաւական խեղդաբանութեամբ է այդ միամիտները, որոնք կը մոռնան թէ քաղաքական բնական ստիպանքներու մէջ գրտուող երկրի մը մէջ կ'ապրին»:

ՕՐԸ ՕՐԻՆ

Սուրիոյ մէջ ապստամբութիւնը (կա)

Պէյրութէն հեռագրեր մը կը հերքէ Լէվկիւրիի պաշտօնաթերթը «Հաքիմիէթ Միլլէթ»-ի այն լուրը թէ նոր ապստամբութիւն ծագած է Սուրիոյ մէջ եւ թէ ապստամբները գրաւած են Հալէպը:
Հեռագիրը կ'աւելցնէ թէ կատարեալ խաղաղութիւն կը տիրէ Սուրիոյ մէջ:

Յրակառուարիական ընկերակցութիւնը

«Յրանսահ-Լիբանան-Սուրիա-Կոմիտէ»-ն իր հիմնարկութեան առաջին տարեգարծին առթիւ առջի օր սարքած էր մեծ հացկերոյթ մը, նախագահութեամբ նախկին մարզպան Հանրի տը ժուլիէի: Ներկայ էին մօտ 50 հրաւիրեալներ: Ճաշէն յետոյ ճառ մը խօսեցաւ տը ժուլիէն, որ ակնարկելով Դամասկոսի մէջ վերջերս ծագած դժուարութեանց, ըսաւ.

«Կացութիւնը պէտք է ճշդուի: Սահմանադիր ժողով գումարուեցաւ, յետոյ յետաձգուեցաւ: Ասիկա չի լուծեր խնդիրը: Այսօր կ'ընկերները աւելի հանդարտ է՝ քան 2-3 տարի առաջ՝ դաշնագիր մը կ'ընկեր համար: Անեղն դուրս գալու ուրիշ միջոց չեմ տեսներ: Սահմանադիր ժողովը դիւան մը ունի կը կարծեմ թէ առանց նախապէս այդ դիւանին հետ համաձայնութեան գալու, մարզպանութիւնը պիտի չկրնայ կրկին ժողովի հրաւիրել Սահմանադիրը: Տրամաբանութիւնը կը պահանջէ մշակել ծրագիր մը, որ պատրաստելով մէկտեղ դաշնագրի մը հիմքերը, Յրանսայի պիտի ապահովէ այն դիրքը՝ զոր պարտի ստանալ Սուրիոյ մէջ. — այսինքն մասնագէտ-խորհրդականի եւ զանազան ցեղերու եւ կ'օրոնքներու միջեւ իրաւարարի մը դիրքը:
Մարաշախ Յոշի մասին վերջ

Տեղական թերթերը երկու օրէ ի վեր ամբողջ էջեր կը նուիրեն — ամառք սեւ շրջագծի մէջ — հանգուցեալ մարաշախ Յոշի:
Պեճիքայի Ալպէր թագաւորը հինգշաբթի օր Պրիւսէյէն յատկապէս փարիզ եկաւ եւ ուղղակի մարաշախ Յոշի քնակարանը գնաց՝ իր յարգանքը մատուցանելու: Հանրապետութեան նախագահ Տուժիկ, Փուանքարէ, Բլէմանսօ, բոլոր նախարարները, մարաշախները, զօրավարները, զբազանները եւ այլ ծանօթ դէմքեր նոյնպէս կրննէլ փողոցի ապարանքը այցելելու: Հինգշաբթի ժամը 4էն յետոյ հազարաւոր ժողովուրդ այցելեց նաեւ մահաանեակը, որ զարդարուած է սեւ թաւիչներով եւ դաշնակից դրօշակներով:
Մարաշախտին մարմինը կիրակի առաւօտ թնդանօթակիր կառքով մը պիտի տարուի Յաղթական կամարին տակ Անձանօթ Չիւնուրի դամբարանին մօտ եւ հոն պիտի մնայ մինչեւ երեքշաբթի: Չիւնուրական պահակախումբ մը պիտի հսկէ դազաղին շուրջ, զիշեր - ցօրեկ:

Յուզարկութեան ժողովը պիտի կատարուի երեքշաբթի առաւօտ Նոթր Ծամի մայր եկեղեցիին մէջ, ուր դամբանական պիտի խօսի վարչապետ Փուանքարէ: Չիւնուրական թափօր մը պիտի ընկերանայ դազաղին՝ էթուալէն մինչեւ Նոթր Ծամ, անցնելով Շան'գ Էլիզէի պողոտայէն եւ Րիփոլի փողոցէն:
Եկեղեցական արարողութիւնէն վերջ, թափօրը պիտի ուղղուի Սէն ժիւրմէի ծառուղիէն դէպի Էնվալիտ՝ անցնելով Երեսփ. ժողովուն եւ արտաքին նախարարութեան առջեւ: Ինչպէս գրեցինք, մարմինը պիտի թաղուի Էնվալիտի մէջ, Նափոլէնի կողքին:
Կտակը բացուեցաւ առջի օր: Ո՛չ մէկ յիշատակութիւն կար յուզարկութեան մասին, միայն գրած էր. «Ո՛չ ծաղիկ, ո՛չ պսակ»: Տիկին Յոշ վարչապետ Փուանքարէի թողուց յուզարկութեանը կատարել կատարութեան ուղած ձեռով:
Երեսփոխանի մը իրմուծին վրայ, վարչապետը երէկ տեսակցեցաւ տիկին Յոշի հետ, հարցնելու համար թէ կը փափաքէ՞ որ ամուսինին մարմինը թաղուի Յաղթական կամարին տակ, Անձանօթ Չիւնուրին քով: Եթէ տիկինը հաւանութիւն յայտնէ, այն ատեն փոխանակ Էնվալիտի, Յոշի մարմինը պիտի թաղուի Էթուալ: Մարաշախտին Չիւնուրական ընկերները սակայն հակառակ են այս մտքին եւ կ'ուզեն որ Էնվալիտի մէջ թաղուի:

Յունաստանի երկրակառուարիական վիճակը

Վարչապետ Վէնիզէլոս պաշտօնական յայտարարութիւնով մը կը պարզէ Յունաստանի երկրակառուարիական վիճակը:
Յունաստանի Դրամատան ոսկիի եւ օտար դրամի պահեստը կը հասնի 10,700,000 անգլիական ոսկիի: Այս պահեստը 150,000 ոսկի աւելի է քան Դրամատան հիմնուած օրը եւ կը կազմէ 100ին 52.70 ամբողջական յանձնառութեանց եւ 100ին 72.50 քաղաքականութեան հանուած դրամին, որուն գումարն է 5,549,853,000 տրախմի: Այսպէս ուրեմն Դրամատանը իր ոսկիի եւ օտար դրամի պահեստներով 2,600,000 անգլիական ոսկի աւելի ունի քան ինչ որ պէտք է համաձայն իր ծրագրին: Դրամատանը ի հարկին կրնայ 2,400,000 տրախմի նոր թղթադրամ հրապարակ հանել՝ առանց ծրագրով եւ ժընեւի Պրոտոկոլներով որոշուած սահմանը անցնելու: Սակայն ատոր պէտք չկայ հիմա:

ՏՈՒՍԵՐ

«ԱՆՋՐՊԵՏԻ ՄԸ ՌՄԵՎԱԿՈՍՏՈՒՄԸ»

Անցեալները՝ աշխատակից մը թերթիս մէջ կը փորձէր բացատրել ինչ հանձնարին մէջ նորագոյն արտադրութիւնը «ԱնՋրպետի մը ուղեգրութեամբ»: Այդ տողերուն մէջ յօդուածագիրը ի վեր կը հանէր կարգ մը լեզուական «զեղեկութիւններ», որոնք իր ճշակին համար հրապոյր մը չէին կազմեր:

Իմբակոճման արդիւնքներն են այդ «զեղեկութիւնները»: Ամէն ինչ քարոզ ու փշուր կ'ընէ ան: Մինչ՝ ուուրին հանած ձայնը կարգ մը նորոնձաներու համար... կարապին երգէն գերադաս է:

Երբ մէկը յաջողի անըմբռնելութեան հասնի, իր վրայ չհիացողները կը նկատէ ծանծաղամիտ մակամացուներ: Իսկ եթէ փորձէք ապացուցանել որ այդ մէկը ոչինչ ունի կծկուած իր շարքին տակ, այն ատեն յանդգնութիւնը իր վերջին աստիճանին տարած կ'ըլլաք:

Յօդուածագիրը նոյնպէս կը հետաքրքրուէր անըպետով: Իր հետաքրքրութիւնը մէջնէ: Երանուցուած նիւթը պէտք է ներկայ ըլլայ պահարանին մէջ: Մինչ հետքը չկար անըպետին, կորսուած էր: Միայն կարծեմ դիւրին է ատոր բացատրութիւն մը գտնել: Անըպետը՝ երբ ումբակոճուի կամ գաւուրի՝ կը շարունակէ մնալ անտեսանելի:

Անըպետին կապուած տաղանդն ալ ինչ ո՛ւ կ'ուզէք որ անտեսանելի չմնայ:

ԵԻ՝ ԲՆՊԱՍՏԻ

ՏՐՈՑԿԻ ԿԱՐԾԻՔԸ

ՔԷԼՈՎԻ ԳԱՇԵՐՔԻՆ ՄԱՍԻՆ

Տրոցկի հետեւեալ յայտարարութիւններն ըրած է Պոլսոյ Միլլէթ թերթին.

«Քէլուի դաշինքը, որով ազգերը կ'աշխատեն անկարելի դարձնել պատերազմը, յառաջիկայ տարւոյն տարիներու ընթացքին դէմ դէմ պիտի հանէ Անգլիան ու Միացեալ Նահանգները: Անգլիա կը խորհրդանշէ անցեալը, իսկ Ամերիկա՝ ապագան: Ամերիկա չի կրնար զարգանալ առանց հարուածելու Անգլիան: Հիմա արդէն կը ձեռք տրուի ծովերու տիրապետութեան, Անգլիոյ ձեռքէն խլուելու համար ծովերու տիրապետութիւնը:
Քէլուի դաշինքը կ'արգիւնէ յարձակողական պատերազմները, սակայն ուժն է որ կ'որոշէ թէ ո՞ր պատերազմն է յարձակողական, որը պաշտպանողական:
Ամէն պարագայի մէջ, որպէսզի ուժ ունենայ, Ամերիկա մեծ թիւով յաճանաւոր կը շինէ»:

Խօսելով Ռուսիոյ ներկայ գործերուն վրայ, Տրոցկի յայտարարեց թէ ինք հակառակ չէ ներկայ խորհրդային կառավարութեան, սակայն անկապ պէտք է փոխել իր արտաքին եւ ներքին քաղաքականութիւնը՝ օրինական միջոցներով եւ ոչ թէ բռնութեամբ եւ ուժով: Համայնակցութեանը անցնելու առաջ չէ ներքին մասին անմիջապէս յետոյ՝ Վէճը անձնական արցակցութեան մասին չէ, այլ քաղաքականութեան կարծիքներու:

ԵԻ՝ ՊԱՍՏԻՆ: Բրէտի Ֆոնսիէի մարտ 15ի վիճակաբանութեան մէջ 50,000 անգլիական հետեւեալ թիւերը. — 1886ի պարտաւճարներէն թիւ 395,471ը, 1903ին երկրէն՝ թիւ 543,484ը եւ 1911ին երկրէն՝ թիւ 70,152:

(Լուրերու շարունակութիւնը կարդալ Գ. էջ)

ՀԱՐԱՇ

Ք Ր Ո Ւ Ն Ե Գ Ի Ն
3 ամս. 6 ամս. Տար.
Ֆրանս 35 ֆ. 70ֆ. 140ֆ.

"HARATCH"

Directeur-Propriétaire
SCH. MISSAKIAN
Rédaction & Administration
235 Faub. St. Martin
PARIS (10e)

Կ Ի Ր Ա Կ Ի
24
Մ Ա Ր Տ
1929
24 M A R S 1929

ՏՄԻԹԻ 914

ՕՐԱԹԵՐԹ, ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԳԻՆ՝ 50 ԱՆՆԹԻՄ

ԵՐԿՈՒ ԽՕՍԲ

ՍՈՒՏՆ ՈՒ ԻՐԱԻԸ

վերջին անգամ մըն ալ քրքրենք Դամասկոսի արաբական
թիթիկ ծանօթ հրատարակութիւնը՝ Դաշնակցութեան դէմ:
«Այս կուսակցութիւնը ոճիրէն և աւազակութենէն ուղիղ
նպատակ չունի», կը յայտարարէ «Էլ Շաապ»: (9 մարտ 1929):

Այս վճռական եզրակացութեան յանգեալու համար, արաբական
թիթիկը կը հրաւիրէ ձեռնադրու Մուսա երթալ. «ուր կը գտնուի
կուսակցութեան կեդրոնը: Հոն է որ կուսակցութիւնը կ'որոշէ
ստանդարտը իւր և արդարութեան»:

Երէկ բացատրեցինք թէ առնուազն թիւրիմացութեան ար-
դիւնք է այս տեղեկութիւնը: Ընկալելու Մուսայի դաշնակցական
կազմակերպութիւնը երբեք տարբերութիւն չունի միւս շրջան-
ներէն, եւ «Էլ Շաապ» ի դուր առանձնաշնորհ մը կը պարզեւէ
այս խոնարհ շրջանին, որ երբեք չէ ունեցած կեդրոն դառնա-
լու կուսակցութիւն վարելու եւ աջ-ձախ որոշումներ տալու
յարակալութիւն: Ինչ կը վերաբերի 1923ի դէպքին, որուն հե-
տեանքով «32 հոգի սպանուեցան եւ այսպէս ալ Դաշնակի
պարզակցութիւնը ամէն կողմ տարածուեցաւ», բացատրեցինք երէկ
թէ պարզապէս տեղական խառն մըն է, ոչ միայն Հայերու,
այլ եւ ընդհանրու համար: Բարբարոսական շրջաններէ մնացած
վանտէթթեան, որ դժբախտաբար կը տեւէ սերունդէ սերունդ:
Կրթութիւնն է որ պիտի խափանէ այս քստմնելի չարիքը: Արդ,
Մուսայի եւ Լիբանանը թրքական լուծէն ազատուած են տասը
տարիէ ի վեր, իսկ տասը տարին կը բաւէ՞ մէկ սերունդ հաս-
նելու, այն ալ սարի մը կուշտին ինկած խեղճուկրակ հայկա-
ն գաղութի մը մէջ...

Այսքանը միայն բուսական է, պայցուցանելու համար որ
«Էլ Շաապ» անխղճօրէն, թիւրեւ նենգամտութեամբ կը զրպարտէ
մտրոջ կուսակցութիւն մը, անոր միակ նպատակ վերադարձով
ոճիր եւ աւազակութիւն: Մենք վստահ ենք որ հայկական
պատմութեան քիչ-շատ ծանօթ ո՛ր եւ է Արաբ պիտի ընդլզի
այսքան վրաս-բաց զրպարտութեան մը դէմ: Կարելի էր այս-
պիսի բաներ քշել, երբ թուրք իշխանութեան տակ էր Դամաս-
կոսը: Անմէտ Ձէքի Աֆիոնին էնկիւրի կամ Ատանիս՝ կ'ապրի,
կ'ազատ եւ ինքնիշխան Սուրիոյ երկնքին տակ:

Եթէ Հայերն են որ այս գողափորը ներշնչել են արաբ
թիթիկին — եւ մենք լրջօրէն կը կասկածինք — հազար ամօթ
անցնելու իսկ եթէ թուրքեր կամ Սուրիացիներ են, պարզապէս
կ'արգահատինք: Այդպիսի բանարկուններու դէմ կարելի է հա-
նալ բազմաթիւ լուրջ եւ ազնիւ ընդհանր, նոյն իսկ թուրքիայէն
Սուրիա անցած պաշտօնատարներ, որոնք շատ մօտէն կը
ձանձնան և՛ Դաշնակցութիւնը և՛ հայ ժողովուրդը:

ՕՐԸ ՕՐԻՆ

ՊԵՅՐՈՒԹԻ ՀԱՅԱՆՈՒՆ ԴԱԽԱՆՆԵՐԸ
ԿԸ ԽԱՐԱՆՈՒՄԻ ԶԵՂՈՔ ԲՆԱԿԱՅԻՍ ԵՒ ԿՈՂՄԷ

Հայաստանի հոշնակ շաբաթակցութիւնը, որ ծանօթ է իր հակա-
դաշնակցական հակումներով, կը հրատարակէ իր Պէյրութի թըզ-
թակցին մէկ գրութիւնը ծանօթ ոճիրին մասին: Կը քաղենք հե-
տեւեալ մասերը.
«Ոճիրը, բնականաբար, վերագրուեցաւ դաշնակցութեան, եւ
այն գործի լծուեցան հիւսկուակորդները: Ամբիջապէս կազմուե-
ցաւ քաղաքի բոլոր աչքաու դաշնակցականներուն անուանա-
ցանկը, եւ կուսակցութիւնը որ կ'երեւայ թէ կը քաջայերէ իր
պաշտպան մէկտեղ եկած կարգ մը մարդիկ եւ անոնց իսկ
Թելադուրութեամբ կը շարժի, ասիկա պատեց առիթ նկատելով Հա-
յերը վարկաբեկելու յաշտ հոգաւոր պետութեան, հիմարտեան
հալածանքները յիշեցնող խտուածամբ մը, կը ձեռքաւալէ, կը խու-
զարկէ եւ կը բանտարկէ հարիւրի մօտ ընտանիքի պատուական
հայրեր, պատուաւոր վաճառականներ եւ անբարիք նկարագրի
տեք մտաւորականներ, պարզ այն պատճառաւ որ անոնք այսինչ կամ
այնինչ հնչակեանք բարկացուցեր են ժամանակաւ:

Գործի լծուած են այն բոլոր դադուհի եւ լաւտնի ոյժերը որոնք
քանի մը ամիս առաջ ռուքի տակ առին Վեհափառ Կաթողիկոսին
խօսքը, անտեսեցին Ազգ. Սահմանադրութիւնն ու օրինաւոր իշ-
խանութիւնը, եւ մեր եկեղեցական պատմութեան մէջ անհասկըն-
թաց յանդուրձեանք մը հաստատեցին իրենց իսկ իշխանութիւնը:
Մենք իբրեւ չէզոք Հայ մը, սրտանց կը դատապարտենք ոճի-
րը, որու ձեռքով ալ որ գործուած ըլլայ ան, բայց չենք կրնար
չդատապարտել նաեւ ընթացքը կարգ մը հայախոն դաւաճաններու,
որ այսօր երեսուն ելած են պղտորուած շուրի մէջ ձուկ որսալու հա-
մար: Իբր ազգին ներկայացուցիչները կը ներկայանան անոնք ու-
տիկաններուն, եւ ամէն օր նորանոր անուններ կը թելադրեն
ձեռքաւալութեան եւ խուզարկութեան համար: Անոնք կը ներկա-
յանան տեղական թիթիկներու խմբաբաժանները եւ կը թելադրեն
յօդուածներ որոնք ամօթ կը բերեն հայութեան, եւ կը զօրացնեն
տեղական կառավարութեան անվստահութիւնը Հայերու հանդէպ:

Ոճրագործները անյայտ են: Միւս կողմէ պնդողներ ալ կան թէ
ոճիրը նոյն ինքն հնչակեաններու գործն է: Եղբարեախո Գ. Տիւրու-
նի կը նկատուէր համայնապար գործիչ մը. այդպէս ալ կը ձանջ-
ցուէր թէ իշխանութեան եւ թէ Հայոց մօտ: Այդ ուղղութեան հե-
տեւած էր նաեւ Հայէպի «Սուրիական Մամուլը» որուն խմբագ-
րապետը եղած էր ինքը, մինչեւ այդ Թերթին կառավարութեան
կողմէ դադարման դատապարտուիլը: Պետն էր Հչ. մասնաձիւ-
ղին: Կ'ըսուի թէ իր համայնապար ընթացքը եւ բարոգութիւնը իրենց
շարքերուն մէջ սարսափի մատնեց ուրիշ կարգ մը շէքեր եւ ա-
նոց մէջ մասնաւոր մէկը, որ ստակ է ամէն կերպ չարագործու-
թեան, եւ ամէն կերպ ոճիրներու: Պառակտեցաւ կուսակցութիւնը
ներքապէս, թէ եւ արտաքուստ դեռ կը պահէր իր միութիւնը: Ան-
հաւանական է այս ենթադրութիւնն ալ: Սարսափի շքան մըն է
որ կ'ապրի Պէյրութի հայութիւնը: Հնչակեան լրտեսներ, ընդհան-
րապէս 14-16 տարեկան պատանիներ լեցուած են փողոցները, կը
հետապնդեն Հայեր, մասնաւոր գոյգեր, մտիկ կ'ընեն անոնց խօ-
սակցութեանց, անոնք Թելադուրութեամբ ոստիկանութիւնը կը կա-
տարէ ձեռքաւալութիւններ: Եղբայր եղբոր դէմ, ամօթալի եւ այլա-
նելի պայքար մըն է որ առաջ կը տարուի ներկայիս:

Ֆոշի սագային յուղարկաւորները

Կառավարութիւնը ամէն միջոց ձեռք կ'առնէ՝ համագային
փառաշուք յուղարկաւորութիւն մը կատարելու համար մարաշախոտ
Ֆոշի: Մարմինը այս առաւօտ ժամը 8.30ին առանց ոեւէ արարու-
ղութեան պիտի փոխադրուի ցաղթական կամարին տակ, ուր 30
ոսնայակ բարձրութեամբ մահաբեմի մը վրայ դրուած պիտի մնայ
48 ժամ: (Կաթողիկոսի կողմէ էթուալի ցաղթական կամարին կա-
ռուցուելէն ի վեր մէկ հոգիի միայն այսպիսի պատիւ եղած է՝
Վիքթոր Հիւկոյի): Կաթողիկոս վրայ պիտի դրուին մարաշախոտին
սուրբ եւ այն գլխաւորը՝ գոր Մեծ Պատերազմին կը կրէր: Կամարը
վերէն վար սեւով պիտի ծածկուի. իսկ ներքին մասին մէջ պիտի
կախուին ֆրանսական եւ դաշնակից դրօշակներ եւ Մեծ Պատե-
րազմին թշնամիէն բարուած կարեւոր յուսազարուիչ: Գիշերը ցաղ-
թական կամարն ու մահաբեմը պիտի յուսազարուին: Երեքշաբթի
առտուան դէմ մարմինը ինքնաշարժով մը պիտի փոխադրուի
Դոմբ ճամ, որուն ճակատը եւ ներքը սեւ շղարշներով եւ զանազան
պարօշկներով պիտի զարդարուին: Հոս եւս մեծ մահաբեմ մը պիտի
պատրաստուի: Արարողութեանց պիտի նախազանց կարգինայ
Տիւրուան: Մարմինը էնվալիտ պիտի թաղուի եւ ոչ թէ ցաղթական
կամարին տակ:

Ցուղարկաւորութեան մասնակցելու համար պատուիրակու-
թիւններ են գինւորական շոկատներ Յամբայ Կլան դաշնակից եր-
կրներէն դէպի փարիզ, ինչպէս նաեւ ցուստանէն, Ռուսմիայէն,
Սերպիայէն, Իտալիայէն եւ Պելճիքիայէն: Հիւլէն պատուիրակութեան
նախազանց է գոր. փարաքէժփոլուստ, հիւլէն բանակի նախկին վե-
րին հրամանատարը: Անգլիոյ պատուիրակութեան գլուխը կը գլու-
նուի իշխան ձորք:
Հայ կամաւորներն ալ իրենց դրօշակով ներկայացուցին պիտի
ուճեանս:
Երէկ ալ հազարաւոր ժողովուրդ այցելեց Ֆոշի ապարանքը:
Այցելուներուն մէջ էր մարաշախոտին եղբայրը՝ Հ. Թէրմէն Ֆոշ, որ
բախանայ է:
«ԿՈՍՍ ՑԵՓԼԻՆ»Ի ՆՈՐ ԹՈՒԻԶԸԸ
Գերմանական «Կոսս Ցեփլին» դեկաւոր օդաւարիկը, որ ղէպի
Յամբայ կ'ելլէ դէպի Մերձաւոր Արեւելք նոր Թեթիք մը համար:
Ցեփլինին մէջ պիտի նստին Ռայխսմակի նախագահ Լէօպոլ, ֆրու-
սիոյ վարչապետ Պրաւուն եւ ուրիշ պետական դէմքեր:

Սոփիայի ուսանողներուն ցոյցերը

«Յայազ» ի Սոփիայի թղթակիցը կը հետագրէ.— Կրթական
նոր օրինադրին կարգ մը կէտերուն դէմ բողոքելու համար անցած
զիշեր ցոյցեր կատարուեցան Սոփիայի համալսարանականներուն
կողմէ: Իրիկուան դէմ ցոյցերը աւելի զբոյժի դարձան եւ աղակալի
տեսարան մը պարզուեցաւ. Սոպրանի մօտ:
Յոյց կազմակերպելու համար նախապէս արտօնութիւն խնդ-
րուած ըլլալով, ոստիկանութիւնը հրաւիրեց ուսանողները որ
ցրուուին: Այս վերջիններու մերժումին վրայ, ոստիկանները զէնք
պարպեցին օդին մէջ, Մօտ հարիւր զնդակ պարպուեցաւ եւ ու-
սանող մը վերաւորուեցաւ: 20 պարազուխներ ձեռքաւալուեցան:
Ուսանողները երեք օրուան դասադուլ յայտարարեցին՝ բողո-
քելու համար իշխանութեան ընթացքին դէմ:

Տրոցկիի Գերմանիա մուտքը արտօնուած

Պոլիս, 23 մարտ.— Տեղույս գերման դեսպանին հրահանգ
արուեցաւ յայտնելու Լէ Տրոցկիի թէ արտօնուած է Գերմանիա
մտնելու: Տրոցկի մօտ օրէն ճամբայ պիտի ելլէ իր կնոջ, զաւակին,
իրեն ընկերացող սպայի մը եւ սպասաւորի մը հետ միասին:
Գերման կառավարութիւնը արտօնեց Տրոցկիի մուտքը՝
այն պայմանաւ որ բժշկական քննութեան ենթարկուի գերման
մասնագէտներու կողմէ եւ երկար չմնայ երկրին մէջ:

Պայխար Տրոցկիի կուսակցութեան դէմ

Խորհրդային կառավարութիւնը որոշեց որ մինչեւ մայիս 1 պի-
տի փոխուին անունները այն բոլոր փողոցներուն, պողոտաներուն
եւ ակումբներուն, որոնք Տրոցկիի անունը կը կրեն:
Կեդրոնական կոմիտէի հրամանով՝ ցոյցեր կազմակերպուեցան
տրոցկիականներուն դէմ՝ խորհրդային բոլոր գործարաններուն մէջ:
Համայնապար բռնիքներու Տնտեսական տակ՝ գրեթէ ամէն կողմ կը
քուարկուին բանաձեւեր, որոնց մէջ Տրոցկի եւ կուսակցիները դա-
ւաճան կը յայտարարուին յեղափոխութեան դատին:
Հակառակ այս կատարի կուրիւն, Մոսկուա չէ յաջողած բոլո-
րովին արժատախիլ ընել շարքերու հակամարտութիւնը Տրոցկիի
հանդէպ: Կարգ մը շրջակայքերու մէջ ընդհակառակն աւելի գօ-
րացած է այդ համակրութիւնը: Այսպէս, Սարատովի մէջ 10 ակա-
նաւոր համայնապարներ արտաքուստեցան կուսակցութեան՝ Տրոցկիի
ի նպատակով ցրուած ըլլալու եւ անոր ի նպատակ գործա-
դուրեցն սարքելու ամբաստանութեամբ:
Նոյնօրինակ եւ ուրիշ քաղաքներու բռնիքներուն մէջէն բազ-
մաթիւ ձեռքաւալութիւններ կատարուեցան: Բոլորն ալ իբրեւ հա-
կայեղափոխական դատարան պիտի յանձնուին:

Իրաքի նախարարական սագայի

Բաղադական տագնապը, որ ծագեցաւ անցեալ յունուա-
րին երբ դահլիճը հրաժարեցաւ, այս օրերս իր լուծումը պիտի
գտնէ՝ անգլ. նոր մարզպան սըր Կիլլերթ Բլէյթընի ուղղակի
միջամտութեամբ՝ համաձայնութեամբ Ֆէյսալ թագաւորին:
Ազգայնական տարբեր միջնեւ այսօր իրենց անհաշտ ըն-
թացքով մերժեցին աջակցել նոր կազմուելիք դահլիճին: Անոնք
հակառակ են անգլիաւորներու դաշնագրի կարգ մը հիմնական
կէտերուն, ինչպէս անգլիական զինուորներու պահպանման Մի
շագնաթի մէջ, եւ անգլիական իշխանութեանց կողմէ շինուած
երկաթուղիներու գնման:
Այս պայմաններուն մէջ Խորհրդարանը պիտի լուծուի եւ
տեղական գործերու վարչութիւնը պիտի անցնի անգլիական
մարզպանին ձեռքը:

Խորուստ յուղարկուած մը արտօնուած

Չարդէպի մէջ ուրբաթ զիշեր ժամը Ցին երկու անձանթ-
ներու կողմէ սպանուեցաւ Թոնի Շէլէյ. թիթիկներու կարեւոր
խմբակի մը տնօրէնը, այն պահուն ուր տուն կը դառնար, եր-
կու անձանթները անոր դիմացը ելան դրան սեմին վրայ եւ
զլուուն ատրճանակի գնդակներ պարպեցին:
Շէլէյ շատ ծանօթ դէմք մըն էր Չարդէպի մէջ: Սպանու-
թիւնը քաղաքական հանգամանք ունի եւ մեծ յուզում առաջ
բերած է քաղաքին մէջ:

Կացութիւնը Սպանիոյ մէջ

Փրիմօ տէ Բիլէրա իր ղեկատարական վարչութիւնը
հետզհետէ կը խտացնէ՝ ընտանեկան բուռն միջոցներով:
Երէկ Սպանիոյ զանազան կողմեր կառավարութեան ի նպատակ
ցոյցեր կազմակերպուեցան՝ վերէն տրուած հրամաններու վրայ:
Սակայն ներկայ հանդարտութիւնը ժամանակաւոր է եւ
քաղաքական լուրջ դէմքեր յոռետես են: Հեռագրի մը համա-
ձայն, որոշ թիւով նախկին սպանիացի նախարարներ մօտերս
պատուիրակութիւն մը կազմած պիտի ներկայանան Փրիմօ տէ
Բիլէրայի, պահանջելով որ եթէ չվերահաստատէ նախկին
պատական վարչաձեւը, գտնէ նոր Սահմանադրութիւն մը հաս-
տատէ: Համալսարանական ուսանողներու վերջին խլրտուումները
իբրեւ առիթ պիտի ծառայեն նախկին նախարարներու այս
զինուորին:

Ամերիկեան նոր սարէչափը

Ուաշինգթոն, 23 մարտ.— Նախագահ Հուվըր գեկոյցով մը հա-
ղորդեց թէ՛ ներգաղթի նոր տարեչափը՝ հիմնուած ազգ. ծագումի
հիման վրայ, գործադրութեան պիտի դրուի այս տարի յուլիս 1էն
սկսեալ: Նախագահը իր ընտրական պայքարին ատեն բուռն կեր-
պով հակառակած էր այս նոր օրէնքին, որուն շնորհիւ կ'աւելնայ
ներգաղթող Ամերիկացիներու եւ իտալացիներու թիւը, իսկ կը պակսի
սկանդինավեան երկիրներուն:
Կը յուսացուի որ խորհրդարանը համաձայնի նախագահի փա-
կաքին:
(Լուրերու շարունակութիւնը կարգալ Գ. էջ)

ԳԻՐ ԵՒ ԱՐՈՒԵՍ

ՓՐՈՑ. ՏՈՏՈՒՆԵՅԻ

ԳՐԱՍՈՍՈՒԹԻՒՆԵՐ

Ինչպէս գրած էինք վերջին հոտովեանց որ Ռուսմանիոյ կողմէ հրաւիրուած էր մէկ քանի դասախօսութիւններ տալու համագործակցութեան մասին, երկրորդ անգամ ըլլալով խօսած է Պուրեշի Առևտրական բարձրագոյն վարժարանին մէջ:

Աշխատանքի նախարարը ունկնդիրներուն ներկայացուցած է փրոֆ. Տոտովեանցը, իբր մէկը որ Փրանսոսի համալսարան տնտեսագէտ Շարլ Ժիտեն յետոյ, ամէնէն կարգաւորուած դէմքն է համագործակցական շարժման զեկազարներուն մէջ:

Փրոֆ. Տոտովեանց խօսած է «Գրիգորանտեսական համագործակցութեան» մասին: Կարճ նախաբանով մը համագործակցութեան էությունը բացատրելէ յետոյ, ընդհանուր գծերով ծանօթացուցած է թէ ինչպէս, Գրիգորանտեսական համագործակցականները մեծապէս նպաստած են իրենց երկիրներու տնտեսական կեանքի զարգացման:

Ետոյ, կանգ առած է Ռուսմանիոյ վրայ, ուր տնտեսական համագործակցութիւնը կը գտնէ յետաձեռն, եւ յանձնարարած է մասնաւոր կարեւորութիւն ընծայել այդ շարժման:

ԹՈՒՐԱՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՄԱՍԻՆ

«Թուրք Օձազը»ներու կեդրոնական վարչութիւնը հրատարակ հանած է տարեգիրք մը «Թուրք երէզ», որ աշխատութիւնն է թուրանականութեան էն կրկնող ջատագովներէն Երուսաղէմէ Երջուրայի եւ թերեւս, արաբական տաւերով հրատարակուած վերջին գործերէն մէկը պիտի մնայ:

Տարեգիրքը կարեւոր է անոր համար որ կը դասաւորէ եւ կը մեկնարանէ թուրանականութեան ծագումը, զարգացումը եւ տեսաբանութիւնը: 650 էջոց այս գրքին մէջ, թուրանական պատմութեան կապուած, բայց ցարդ անծանօթ մնացած կարեւոր զբոսաշրջներ եւս կան արձանագրուած:

Աշխատութեան այս մասը որ կանգ կ'առնէ Օսմ. Սահմանադրութեան հռչակումով, կատարուած է Երջուրայի կողմէ: Մնացեալ մասը որ պատմութիւնը պիտի տայ թուրանականութեան զարգացման եւ գործունէութեան մինչեւ 1930 թուականը, պիտի հրատարակուի երկրորդ հատորով մը:

Այս առաջին հատորին մէջ, զանազան յօդուածներու կարգին, կան նաեւ թուրք հանրագիտութեան պատմութիւնը, Մ. Բեմալի մանրամասն կենսագրութիւնը, անոր կողմէ թուրք երիտասարդութեան ուղղուած շարժումներուն մէկ մասը եւ հանրագիտութեան հիմնադիրներուն ինչպէս նաեւ թուրք գրական, տնտեսական կեանքի մասին գրութիւններ:

Տարեգիրքին երրորդ մասը նուիրուած է «Թուրքիոյ հանրագիտութեան» գոյուր գտնուող թուրքերուն: Գուր մնացած են թուրքերու եւ իրանի բաժնունքները: Այս գլխուն մէջ կը մտնեն կողմաւոր թուրքերուն մասին լիտու Չատէ Գէհմէտ Էմինի 80 էջ ուսումնասիրութիւնը: Բացի այն տեղեկութիւններէն որոնք արձանագրուած են արդէն «Երբէք» շաբաթական կազմութեան մասին: Կարճ գլուխ մը յատկացուած է Տարքանի թուրքերուն:

Զօդուածներ կան նոյնպէս արեւմտեան թուրքիոյ, իրիւմի, կազանի թուրքերու մասին:

Հետզհետէ պիտի տանք գրքին կարեւոր մասեր:

ԿԵԱՆՔԻ ԵՒ ՎՊԱՍՈՒՆԵՐԸ

Երիտասարդ տաղանդաւոր գրող Քրանտուս Մորիսը մօտ առաւելու հրատարակութեան կուտայ նորագոյնը: Հաւաքածոյ մը, ուր յառաջաբանով մը կը խօսի վիպագրութեան արուեստին վրայ: Հեղինակը դիտել կուտայ կեանքը որ կարգ մը վիպասաններ կը վարեն, իբր արուեստի պահանջ:

Մորիսը որ ամուսնացած է, զուգահեռութեամբ տէր եւ կը վարէ պատուական ու հանդարտ քաղքենի կեանք մը, կ'ըսէ:— «Ոչ զուգահեռ, ոչ ալ պատաս-

խանատուութիւններ, այլ զարգացուած կեանք մը, ճամբորդութիւններ, (թանգարաններ կամ տաք երկիրներ, համաձայն սեռին զոր կը մշակէ գերմարդը, փորձարկութիւններ, սեռային կեանք, արուեստական գրախոսներ (պէտք է ճանչնալ ամէն ինչ): Ճանչնալ ամէն ինչ, բացի անշուշտ հասարակ կեանքը: Այս ընտրանքին, հանապազօր հազէն զատ կը մնան ամէն բանով...»

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐ

Փարիզի Հայ Ուսանողական Միութեան Գլխանը կը խնդրէ մեզմէ հրատարակել հետեւեալ տեղեկութիւնները:— Փ. Հ. Ու. Միութեան ընդհանուր ժողովը տեղի ունեցաւ անցեալ շաբաթ երեկոյ: Ընարեց մնայուն դիւան, որոնց անժամեայ վարչութիւնը պաշտօնի վրայ պահել այս տարեշրջանին համար անընդմեջ երկու անդամներ եւս: Ծրագրի ծանուցարի վերջնական բարեփոխումները կատարուեցան եւ պաշտօն յանձնուեցաւ վարչութեան տղայքի տղայ զայն:

Ըստ նոր ծրագրին, նախկին ուսանողները Միութեան կ'անդամակցին իբրեւ համակիր անդամ եւ իրաւունք ունին ընտրուելու ընտրուելու, պայմանով որ համակիր անդամներու թիւը փոքրամասնութիւն կազմէ գործունէ անդամներու թիւին՝ ո եւ է յանձնարարութիւն մէջ:

Վարչութիւնը տեղեկութիւններ տուաւ Փարիզահայ Տիկնանց Միութեան վարչական անդամներու հետ ունեցած տեսակցութեան մասին: Տիկնանցը համակրանքով հետեւելով Միութեան գործունէութեան, այլեւս չպիտի կերտան նիւստիակալութեան օժանդակել, ինչպէս անցեալին մէջ:

Այսուհետեւ Միութիւնս պիտի ջանայ իր իսկ միջոցներով (անդամավճար եւ հանդէսներու կազմակերպութիւն) պատրաստել տարեկան պիւտեճէ. կարենալ շարունակելու համար կարօտ ուսանողներու օժանդակութեան հարցը:

Յարգանքով կ'ըսենք, որ տեղեկութիւններու ու նոր անդամակցի փափաքով ուսանողները դիմեն, 3, rue Soufflot արճարանը վարչութեան ժողովներուն ամէն հինգշաբթի ժամը 6,30 — 7,30:

ԲԱՑ ՆԱՄԱԿ

ՊԵՅՐՈՒԹԻ ՀԱՅՐԵՆԱԿՅՆՆԵՐՈՒՄ

Յատով իմացայ Ս. Տիգրանի սպանութեան արժեքն ձեր միջոցաւ՝ քանի մը հարեանակցներու բանտարկութեան լուրը: Անոնք 1920ի Հասնոյ ինքնասեպանահասար գոյամարտին, ձեզի հետ կողք կողքի կուրծք տուած էին թուրք խուժանի գրոհին դէմ՝ պաշտպանելու համար բոլոր մեր հայրենակիցներուն կեանքն ու պատիւը:

Ամբողջ Հասնոյ ժողովուրդին հազիւ 3—400 հոգի մազապուր ազատուած, մեծ մասամբ տեղաւորուած էին Մուրթի հիւրընկալ հողին վրայ եւ իրենց չարքաւ աշխատանքով ինքնաբար զարձած, լանկարծ ձեզի պէս քանի մը կ'աշխատէր, ծանօթ խմբակներու դաւերուն գործակալ հանդիսանալով՝ գիշեր ցերեկ դաւեր կը լարէր՝ համեստ գաղութներու հանգիստը վրդովելով:

Այս մասին փաստերը պերճաբար են. իշխնք ձեր միջոցաւ վարչապետանի սպանութիւնը, — որբացնելով անշահաս պատկաններն ու անօրհական այրին, ձերուսպարգ կաթողիկոսի անարգութիւնը, ազգային իշխանութիւններու առօրինակ համարուելը, ապօրէն ինք. իտրուրդի մը կազմութիւնը յանձնին իրաւունքներէն, նոյնով ճաղատանքներ, հերոս՞ Սաչեանի եւ արբանակներուն, եւ այս ամէնէն չզոհաւորով, վերջին անգամ ալ սկսաք Արամեանցներու, Եսաեաններու և նմաններու պակասը լրացնել:

Տննդու աշխատանքի էք լծուած յանուն «Սոցիալ-Դեմոկրատի» եւ «Լէնինիստի» մոխրի վրայ նստեցնելու համար բազմաթիւ մարեր ու անտէր քոյրեր խոսնա զնտաններու մէջ խմբակներով այնքան ծաղիկ կեանքեր, որոնք զեռ ձեզի հետ միասին, երէկ ազատուեցան նախկին ձեր թշնամի իսկ այժմու ընկեր՝ Բէմալի ետեւանէն:

Հայրենակիցներ, եթէ Մոսկուայի «Զեկան» կամ «Գրամը Միասին» պաշտօն է յանձնած ձեզի՛ այն ատեն ըսելիք չունիմ, ինչով որ հարեանքի կամ հարեանակցի գոյութիւնը ժխտելի է ձեր սկզբունքով:

Իսկ եթէ անաստական քեւանխորութեան տարուած է որ կ'ընէք այդ մասնութիւնները, Հասնոցիներու պատիւ չի բերեր:

Եթէ անգրադառնաք ձեր գործած աւերներուն ու սրբէք անհերոսներ են, մարդաբէներ, բանաստեղծներ: Կը հաւատում զազափարներու եւ անոնց զեղեցիկութեան: Ո՞վ է այն զեռն, հասարակ, անարդ մարդը որ կրնայ առանց խոտովի անցնել իրապէս զազափարական ու հերոսական կեանքի մը առջեւն (թքած, այդ մարդուն վրայ): Կը հաւատամ պայքարներու շատ մը պայքարներու, արիւնքի, զոտար, սանձարեկ՝ որ մարդիկ մղած են, պիտի մղեն, կը մղեն մեր շուրջը ամէն օր, մեզ հողին կապող բազմաթիւ կապերու դէմ, արգելքներու դէմ, մեր աւերակներէն բարձրացող յուսարեկութեան ճիչներուն դէմ:

— Կը հաւատամ բարձունքներու: Մեր մեծ ու լուսակատար Մասիսին: Գու Մասիսի՛ որ հողիկ տարածութիւններուն վրայ շեղուող կը կանգնի, ընկեր, իմ Մասիսի՛ որուն եղբրներուն վրայ մարմինս կ'արիւնի ամէն օր: Օրը կուգայ երբ ես կը բարձրանամ իր կատարը: Կը հաւատամ նաեւ որ ուրիշ ժողովուրդներ ուրիշ լեռներ ունին՝ նոյնքան լուսակատար, նոյնքան հազարամեայ, նոյնքան յաւիտենական, ո՞վ կ'համարու:

